Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 585 - Ա որոշման

«Երկարօրյա դպրոց»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Արցախի Հանրապետության Աշան, Բերդաշեն, Չափար, Խրամորթ, Կարմիր շուկա, Սոս, Թաղավարդ համայնքների դպրոցների աշակերտների ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու, դասապատրաստումներին աջակցելու, ինքնուրույն սովորելու կարողությունները, ստեղծագործական ունակությունները զարգացնելու, կրթական հավասար հնարավորություններ ապահովելու և մանկավարժական համապարփակ մոտեցման միջոցով աշակերտների ու նրանց ընտանիքի զբաղվածության և այլ կարիքներին արդյունավետ աջակցելու նպատակով, երկարօրյա ենթակառուցվածքների ստեղծում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օգտվել հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 26/1, ՀՎՀՀ՝ 02507456) և Բելգիայում Արցախի բարեկամության խումբ:
4.	Ծրագիրը կատարողը	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ (ՀՀ, ք. Երևան, Բուզանդ 1, 31, ՀՎՀՀ՝ 02834897)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արցախի Հանրապետության Աշան, Բերդաշեն, Չափար, Խրամորթ, Կարմիր շուկա, Սոս, Թաղավարդ համայնքներ՝ կրթության բնագավառ:
6.	Ծրագրի բյուջեն	99,824,740 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Արցախի Հանրապետության Աշան, Բերդաշեն, Չափար, Խրամորթ, Կարմիր շուկա, Սոս, Թաղավարդ համայնքների դպրոցներ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	25 հուլիսի 2021 թ. – 31 օգոստոսի 2021 թ.

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Յուրաքանչյուր դպրոցում վերանորոգվելու և արդիականացվելու են 2-ական դասասենյակ՝ տարրական և միջին դպրոցների համար՝ 2021 թ. հուլիսի 25-ից մինչև օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածում, 54,454,136 դրամ գումարի չափով. 2. Յուրաքանչյուր դպրոցում կառուցվելու է ճաշարան, խոհանոց և պահեստ՝ տաք սնունդ տրամադրելու համար՝ 2021 թ. հուլիսի 25-ից մինչև օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածում, 45,370,604 դրամ գումարի չափով :
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Շինարարական նյութերի ձեռքբերում՝ 24,473,000 դրամի չափով. 2. Շինարարական աշխատանքների իրականացում՝ 16,314,740 դրամի չափով. 3. Կահույքի և ուսումնական սարքավորումների ձեռքբերում՝ 38,139,000 դրամ. 4. Ճաշարանային սարքավորումների և պարագաների ձեռքբերում՝ 20,898,000 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Սույն ծրագրով կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավար-ման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի իրականացման ընթացքին ակտիվորեն ներգրավված են Արցախի Հանրապետու-թյան կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, Արցախի Հանրապետու-թյան տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարությունը, «Հայաստան» համահայկական հիմնադրամը և Աշան, Բերդաշեն, Չափար, Խրամորթ, Կարմիր շուկա, Սոս, Թաղավարդ գյուղերի համայնքապետարաններ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարության և «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից, ինչպես նաև ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և

		գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով հաշվետվություններ կներկայացվեն բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Տ. ԱՎԻՆՅԱՆ

14.07.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ